

## 18. ՄՈՎՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀԸ

Չորսուկէս տարի նստաւ Մովսէս կաթողիկոսական դահին վրայ. կառավարեց երկաթի բազուկով եւ հայրական դժով. բարենորոգեց հայրապետական աթոռը, ծաղկեցուց աւերակ եկեղեցիները, բացաւ դպրատուններ, հասցուց աշակերտութիւն եւ հանդեաւ բարի անուամբ եւ լի արդեամբք:

Մովսէս կաթողիկոս վախճանեցաւ 1633, Մայիս 21ին երեքշաբթի օրը մը, «յորում գիշերն գտին զգեոյր յառաջին պահուն», այսպէս կը նշանակէ ճշգրիտ տարին ամիսն եւ ժամը Մովսէս կաթողիկոսի նօտարը (Ղազար քահանայ † 1636. հմմտ. էջմ. Թ. 1714) հետեւեալ տողերու մէջ, զոր գտած եմ էջմիածնի Թ. 507 ժամադրքի մէջ, Թղ. 323 ա:

«Յամի մարդեղութեան Տեառն մերոյ կեանարարի ՌՈՂՁ<sup>1</sup> եւ ըստ մերոյս գրոյ թուի ՌՁ եւ Բ, Մայիսի ամսոյ Հոովմայեցուց երկտասն եւ մի. եւ Հայոց ամսոյ Արեգի եւրն եւ տասն, յինանց զատկի հինգ կիւրակէին, պատկեր աւուրն երեքշաբաթ, յորում գիշերն գտին զգեոյր, առաջին պահուն, եղեւ վախճան մեծ կաթողիկոսին Հայոց տեառն տէր Մովսէսի, երկրորդ Լուսաւորչի, ամաց իբրեւ յիսուն եւ հնգից, կացեալ յաթոռ հայ-

<sup>1</sup> Փրկչական Թուականի սկիզբը սովորականէն երեք տարւով կանուխ ստեղծած է ըստ Եւսեբեայ: